ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ն. Ծ. ՊԱՊՈՒԽՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կենտրոն՝ Ստեփանակերտի տեղում եղել է Խանքենդ անունով մի գյուղ, որտեղ 1847 թ. ռուսական զորանոց է հիմնադրվել։ Նրա մասին Մ. Բարխուդարյանցը գրում է. «Տափարակս պատկանում է Վարարակն գյուղի բնակչաց, որք փոխադրված են Շուշի. բայց գյուղի ավերակն, քարուկիր եկեղեցին և հանգստարանն մնում են Խանքյանդու հյուսիսային ձորակի ձախ լանջի վերա Վարար-ակն աղբյուրի մոտ»[1]։ XIX դ. ռուս զինվորականների և պաշտոնյաների կողքին այստեղ բնակություն են հաստատել Շուշի, Կարկաժան, Խանածախ, Փահլուլ գյուղերի հայ բնակիչներ, որոնք դարի վերջում 60 ծուխ են կազմել[2]։ Ռազմական նշանակությունը, Եվլախ-Շուշի-Գորիս մայրուղու վրա գավառական կենտրոնին՝ Շուշուն մոտ գտնվելը պատճառ են դարձել բնակավայրի ավան դառնալուն։ Այդ ժամանակ այստեղ եղել են մի քանի հասարակական շենքեր՝ փոստ, գավառական դատարան և արական միդասյան դպրոց՝ ընդամենը 35 աշակերտներով։ Արդյունաբերություն գրեթե չի եղել։ Առողջապահական ոչ մի հիմնարկ, անդամ բուժկայան գոյություն չի ունեցել[3]։

Ադրբեջանում հաղթանակած սովետական իշխանությունը 1920 թ. մայիսին տարածվեց նաև Լեռնային Ղարաբաղում։ 1923 թ. հուլիսի 7-ի դեկրետով Ադրբեջանի սովետների կենտրոնական գործադիր կոմիտեն հռչակեց մարզի ինքնավարությունը։ Նոյեմբերի 23-ին Ղտրաբաղի խորհուրդների առաջին համագումարը Խանքենդը վերանվանեց Ստեփանակերտ և դարձրեց մարզի կենտրոն։ Այն միևնույն ժամանակ կենտրոնն է համանուն շրջանի, որը մինչև 1930 թ. Խաչեն էր կոչվում և ընդգրկում էր նաև ներկայիս Շուշու շրջանը։ Ստեփանակերտի բնակչությունը 1917 թ. շուրջ 1500-ից աճել է՝ այժմ հասնելով 30000-ի։

Սովետական իշխանության տարիներին այստեղ նշանակալից աշխատանքներ կատարվեցին մետաքսագործությունը և գինեգործությունը գործարանային հիմքերի վրա դնելու և թեթև արդյունաբերության այլ ճյուղեր ստեղծելու ուղղությամբ։ Զգալի աշխատանքներ կատարվեցին կրթական, մշակութային և հատկապես առողջապահական հիմնարկների ստեղծման բնագավառում։ Քաղաքի կառուցապատման համար տարբեր ժամանակներում սահեղծվել են համապատասխան հիմնարկներ և կազմակերպություններ (1944 թ.՝ մարզային սովետի գործկոմի ճարտարապետական-շինարարական բաժինը, 1963 թ.՝ քաղսովետի գործկոմի ճարտարապետական բաժինը)։

Քաղաքը երկարությամբ տարածվում է Ղտրաբաղի լեռնաշղթայի արևելյան ճյուղերից մեկի ձորերով կտրտված լանջի վրա, որը ծովի մակերևույթից

1 Մ. Բարխուդարյանց, Արցախ, Բաքու, էջ 151։
2 Նույն տեղում, էջ 152։
3 «Փայլակ», 5. IV. 1915։

750—900 մ. բարձրության վրա փռվում է հարավից հյուսիս-արևելք։ Քաղաքի արևելյան կողմով հոսում է Կարկառ գետը, որին ձախ կողմից, քաղաքից 1,5 կմ հեռավորության վրա, միանում է Խալֆալի գետը։ Մերձակա լանջերը պատված են մարգագետիններով, թփուտներով ու անտառներով։ Կլիման բարեխառն է՝ մեղմ ձմեռով և համեմատաբար շոգ ամառով։ Տեղումների քանակը բարձր է (560 մմ)։ Քամիները մեղմ են, տեղական բնույթի, ցերեկը՝ հարավից հյուսիս, իսկ գիշերը հակառակ ուղղությամբ։

Քաղաքի հարավային, հին հատվածը տեղավորված է վերին տափարակի վրա, որտեղ նախասովետական շրջանում գտնվում էր ցարական զորանոցը։ XX դ. սկզբին, երբ բնակչության աճի հետևանքով ավանի կառուցապատումը խտացել է, փողոցները եզերվել են մեծ մասամբ քարաշեն, 1—2 հարկանի առանձնատների և ցանկապատերի անընդհատ շարքերով. երևան են եկել հին գավառական քաղաքներին հատուկ միապաղաղ ծավալներով ու հարթություններով պարփակված կանաչ թաղամասեր և միջանցքաձև փողոցներ։ Արևապաշտպան ծառաշարքերը, տեղ-տեղ ճակատներից դուրս կարկառված պատշգամբները փոքր ինչ աշխուժացրել են փողոցների միօրինակությունը։ Դրանք դեռ 20-ական թթ. սալարկվել են ու բարեկարգվել, իսկ այժմ ասֆալտապատ են։

Քաղաքի ջրամատակարարումը երկար ժամանակ կատարվել է նահապետական ձևով, աղբյուրներից։ Ջրի պահանջը, մասամբ միայն, բավարարվել է 1925—1927 թթ. Փահլուլից ջրանցքով խմելու ջուր բերելու շնորհիվ։

Քաղաքի կառուցապատված տարածությունն այժմ ավելի քան տասնապատկվել է և կազմում է մոտ 420 հեկտար, իսկ նրա ամբողջ տարածությունը 1050 հեկտար է։ Այնուամենայնիվ, պահպանվել է հին մասի փողոցների ցանցը, որի հյուսիս-արևելյան մասում, դեռևս 1929—1930-ական թթ., կազմակերպվել է քաղաքի կենտրոնը՝ որպես շրջանաձև հրապարակ։ Այստեղից ճառագայթաձև սկսվում են գլխավոր փողոցները, որոնցից մեկը՝ քաղաքի մուտքը հանդիսացող Կիրովի պողոտան, ձգվում է դեպի հյուսիս-արևելք։ Հոկտեմբերյան փողոցը դեպի արևմուտք ձգվող կարճ, բայց քաղաքի կենտրոնը ձևավորող և մի շարք փողոցներ իրար կապող հանգույց է։ Հրապարակից իր լայնարձակ ու գեղանկար տեսարաններով դեպի հյուսիս տարածվում է քաղաքի կենտրոնական հեղեղատը, որը եզերված է Կիրովի պողոտայով և քաղաքի հին մասից իջնող Թումանյան փողոցով (նկ. 1)։

Ստեփանակերտի հատակագծման և կառուցապատման առաջին նախագիծը կազմվել է 1938 թ. Ադրբեջանի պետական նախագծային ինստիտուտում՝ Սլոբոտյանիկի ղեկավարությամբ։ Քաղաքի զարգացման երեսնամյա հեռանկարի համար նախատեսված էր 20000 բնակչություն։ Արդյունաբերական գոտուն էին հատկացված հյուսիսային և հյուսիս-արևելյան ցածրադիր ծայրամասերը։ Այդ հաջող լուծում էր, որովհետև առկա էր պահանջվող սանիտարական մեկուսացում բնակելի մասից։ Բնակելի հատվածում նախատեսվում էր պահպանել առկա կառուցապատումը, բայց բնակարանային շինարարությունը կատարվում էր գերազանցապես հին եղանակներով և անհատական միջոցներով։

Հատկապես ետպատերազմյան տարիներին ավելի որոշակի դարձավ հասարակական կենտրոնը՝ Շահումյանի անվան կլոր և նրանից փոքր ինչ արևմուտք տեղավորված Լենինի ուղղանկյուն հրապարակների շրջակայքում։ Հա-

շող լուծում էր քաղաքի հարավ-արևելյան ազատ, առողջարար տարածություններում բուժսպասարկման մարզային կենտրոնի ստեղծումը։ Ավտոտրանսպորտի արտաքին և ներքին գծերի համար քաղաքի հյուսիս-արևելյան ծայրամասում, Կիրովի պողոտայի վրա կառուցվեց ավտոկայան, իսկ արտաքին տրանսպորտի փողոցներով երթևեկը բացառելու նպատակով քաղաքի հարավ-արևելյան մասում ստեղծվեց մի այլ կայան։ Եվլախ-Աղդամ-Շուշի-Լաչին-Գորիս երթևեկը կատարվում է Կարկառի ձորով քաղաքը շրջանցելու միջոցով։ Օդային հաղորդակցության համար օդանավակայան է կառուցվել Եվլախի ճանապարհով քաղաքից 8 կմ հյուսիս, Խոջալու գյուղի մերձակայքում։

Ամառվա շոգը մեղմելու, գոլորշիացումը նվազեցնելու և քաղաքը զար-



Նկ. 1. Մարզային ստադիոնը կենտրոնական հեղեղատում

դարելու նպատակով մայթերի վրա ստեղծվել են գազոններ, թփերի և հատկապես սաղարթախիտ ծառերի շարքեր։ Առավելապես բարեկարգ են Լենինի և Կիրովի պողոտաները։ Ստեղծվել են նաև հասարակական օգտագործման կանաչապատ տարածություններ։ Քաղաքի հարավային մասում՝ Կարմիր բանակի փողոցի վրա գոյություն ունեցող Ազիզբեկովի անվան ճեմելիքի կողքին գցվել է Կնունյանցի պուրակը, Շահումյանի հրապարակի մոտ՝ Պիոներների մանկական այգին, Հոկտեմբերյան փողոցում՝ դատարանի շենքի առջևի պուրակը, կենտրոնական հեղեղատի մեջ՝ քաղաքային զբոսայգին, որի բարեկարգումը շարունակվում է։

Բնականաբար, քաղաքի առաջին հատակագծման ժամանակ հնարավոր չէր հաշվի առնել և բավարարել նրա բոլոր տեսակի պահանջները։ Հետագա տարիներին կատարվել էին չնախատեսված կառուցումներ ու վերակառուցում-

ներ, իսկ բնակչության թիվն անցել էր նախատեսված սահմանը։ 1968 թ. ըստեղծվեց քաղաքի հատակագծման և կառուցապատման նոր նախագիծը (հեղինակ և գլխավոր ինժեներ՝ ճարտարապետ Բ. Դադաշյան, հեղինակակիցներ՝ ճարտարապետ Մ. Դատիև, Ադրբեջանի պետական նախագծային ինստիտուտի մի խումբ մասնագետներ)։

Նոր նախագծով ևս պահպանվում է քաղաքի կառուցապատման համակարգը, ավելի որոշակի են դառնում ֆունկցիոնալ գոտիներն ու տրանսպորտային հարցերը, որոշվում բնակելի հատվածի քաղաքաշինարարական բաժանումները, դրանց մշակութա-կենցաղային օբյեկտների անհրաժեշտ քանակը և այլն։ Բնակչության հեռանկարային քանակը 1980 թ. համար սահմանվում է 50000։ Ելնելով տեղական արդյունաբերության թեթև բնույթից և նշանակալից հանքարդյունաբերության բացակայությունից, նոր հատակագծում արդյունաբերական շրջանի մեծ վերափոխումներ չեն նախատեսվել։ Քաղաքում կան արդյունաբերության նաև այլ ճյուղեր, որոնց համար հումքային աղբյուրներ ձեռք բերելը դժվարություն չի ներկայացնում (գործիքների, զանազան սարքերի, մեխանիզմների, մեքենաների արտադրություն և այլն)։ Գոյություն ունեցող էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը հնարավորություն է տալիս զարգացնելու այդ ճյուղը և իրականացնելու նաև էլեկտրագործիքների նախատեսված արտադրական ձեռնարկության ստեղծումը։

1968 թ. նախագծով, նկատի ունենալով քաղաքի փոքրությունը, այն դիտվում է իբրև մի բնակելի շրջան, բաղկացած 4—5 հազար բնակիչ ունեցող միկրոշրջաններից[4]։ Այդ հաշվով էլ խոշորացվում են գոյություն ունեցող թաղերը, ձևավորվում սպասարկման կենտրոնները, որոշվում աշխատանքի և հանգստի պայմանները և այլն։ Հարավ-արևելքում քաղաքի սահմանների մեջ է ընդգրկվում Ստեփանավան բնակավայրը, իսկ հարավ-արևմուտքում Կրկժանը, որոնց համար նախատեսվում են առանձին սպասարկման կենտրոններ։ Մանրամասն հատակագծեր են կազմվել պետական տիպարային շենքերով կառուցապատվող հարավային, հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան բնակելի զանգվածների համար, որոնց շնորհիվ քաղաքը զգալիորեն մեծանում է։ Այս զանգվածները քաղաքի կենտրոնի հետ կապում են երեք մայրուղիներ։ Բնակելի հատվածի ընդարձակման համար մոտ 50 հեկտար հողամաս է նախատեսված քաղաքի հարավ-արևմտյան և հյուսիսային մասերում, իսկ հետագայի համար նշվել է հյուսիսից խնձոխ գյուղն ընդգրկելու հնարավորությունը։ Բնակելի տարածությունների ընդարձակման շնորհիվ արդեն իսկ խախտվել է արդյունաբերական գոտու մեկուսացվածությունը։

Համադրվածքային առումով քաղաքի կենտրոնական մասերում նախատեսվում են միջին բարձրության շենքեր, որոնց մեջ իշխելու են սահմանափակ թվով բարձրերը, իսկ ծայրամասերում՝ առանձնատներով պատած ընդարձակ տարածություններ։ Նոր զբոսայգիներ են նախատեսված քաղաքի հյուսիս-արևմտյան, հյուսիս-արևելյան և հարավային մասերում, որոնք առկա կանաչ տարածությունների, նախատեսվող շերտերի և մերձքաղաքային կանաչ զանգվածների հետ միասնական համակարգ են կազմելու։

---

4 Ընտրված է բնակեցման նվազագույն խտության նորման այն դեպքում, երբ մինչև հինգ հարկանի շենքերի առկայության պայմաններում թույլատրվում է մինչև 12 հազար, իսկ բազմահարկ շենքերի գոյության պարագային՝ մինչև 18 հազար մարդ։ Տե՛ս „Строительные нормы и правила", II к, 2—62, н. 5. 3:

Արդյունաբերական մասում և քաղաքի շրջակայքում այժմ կատարվում են մի շարք կոմունալ-կենցաղային և սանիտարա-տեխնիկական կառուցումներ, որոնցից ամենակարևորը նոր ջրմուղի կառուցումն է։ Այն սկսվում է քաղաքից մոտ 20 կմ հեռավորության վրա Ջայղոշան կոչված վայրից և կազմում է շրամբաբներից, ջրհան ու մաքրման կայաններից բաղկացած մի բարդ համակարգ։ Ընդարձակվում է կոյուղու ցանցը։

Նոր գլխավոր հատակագծում հաջող է կազմակերպված ճանապարհների ցանցը։ Բարդ-կտրտված տեղանքում հաջողվել է ներքաղաքային և մերձքաղաքային ճանապարհներով ու փողոցներով միասնական համակարգ ստեղծել։ Առանցքային դեր է հատկացվել Կիրովի և Հոկտեմբերյան մայրուղիներին, մարդատար և բեռնատար մեքենաների համար սահմանվել են շրջանցող բեռնաթափիչ գծեր։ Բնակելի և արդյունաբերական տարբեր շրջաններ կապող Թումանյան, Մարքսի, Գորկու և Կամոյի փողոցներով մի մեծ օղակ է նախատեսված, որի կենտրոնական մասում Կամոյի փողոցը 90 աստիճանի տակ հատվելու է Կիրովի պողոտայի հետ տարբեր մակարդակներում։ Այն անցնելու է կենտրոնական հեղեղատի կամուրջով։ Ստորգետնյա մի անցում էլ նախատեսված է դարձյալ Կիրովի պողոտայի վրա, ավելի ցած՝ ինը հարկանի, անհատական մեքենաների գարաժի համար։ Թումանյան փողոցն ու Կիրովի պողոտան հեղեղատի միջով իրար կապող հաջորդ մայրուղին՝ Մարքսի փողոցը, միացնելու է հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան բնակելի զանգվածները։ Քաղաքային ճանապարհների շարքն է դասված նաև Եվլախ-Շուշի մայրուղու քաղաքամերձ հատվածը, որը միացած է փողոցների քաղաքային ցանցին։

Այս բոլորը ցույց են տալիս, որ Ստեփանակերտը կառուցապատվում է ժամանակի պահանջներին համապատասխան։

Ստեփանակերտի կառուցապատման հին և նոր նախագծերում զգալի տեղ են գրավել գեղարվեստական խնդիրները։ Գլխավոր շեշտը դրվել է քաղաքի տարբեր հատվածների միասնական համալիրի մեջ ընդգրկելու վրա։ Դրա իրագործումը և առանձին հանգույցների մշակումը վստահվել է տեղական մասնագետներին, որոնք հանդես են բերում ստեղծագործական ուրույն կարողություն։ Այդ մասին է խոսում հենց քաղաքի մուտքը ձևավորող հուշարձանը (նկ. 2)։

Ճանապարհից աջ, սիգապանծ լեռների ֆոնի վրա, կանաչ թփերով շրջապատված բլրի գագաթին արձանացած է ղարաբաղցի տղամարդու ու կնոջ խորհրդանշական դիմաքանդակը՝ ավանդական տարազով, անհողդողդ կեցվածքով ու սևեռուն հայացքով։ «Մենք ենք, մեր լեռները...»,— փորագրված է հուշարձանի վրա։ Դա խորհրդանշում է ստեղծագործ աշխատանքի, արդար վաստակի և մեծ հավատի գոյատևումը։ Կոթողը կազմված է բազմաթիվ քարերի շարվածքից, որը հաղվագյուտ երևույթ է քանդակագործական արվեստում։ Կառուցվել է 1967 թ., հեղինակներն են քանդակագործ Ս. Բաղդասարյանը և քաղաքի գլխավոր ճարտարապետ Յու. Հակոբյանը։

Քանդակագործական-ճարտարապետական այս կոթողը վաղորոք նվաճելով այցելուի համակրանքը, նախապատրաստում է նրան հետաքրքրվելու քաղաքի առօրյայով, պատմությամբ և մանավանդ ճարտարապետությամբ։ Սրա շարունակությունն է Կիրովի անվան լայնահուն, ծառազարդ պողոտան, որը միանգամայն նոր է գրեթե ամբողջ կառուցապատմամբ (բարեկարգման նախագծի հեղինակ՝ Ա. Շիրինյան)։ Երկու կողմից շղթա կազմած իրար են հա-

որդում բնակելի և հասարակական շենքերը, հարթ, անպաճույճ, բայց արտահայտիչ սոլիտակ կրաքարե ճակատներով, բացվածքների ու պատշգամբների ռիթմիկ շարքերով։ Դրանց զգալի մասի տիպարայնությունը, ուսումնական, մշակութա-կենցաղային սպասարկման և այլ հասարակական շենքերն այստեղ լցված լինելով կառուցապատման մեջ, տեղ-տեղ արտահայտչական շեշտեր են դարձել։

Նկ. 2. «Մենք ենք մեր լեռները» հուշարձանը

Քաղաքի այս հատվածում աչքի են ընկնում վարդագույն տուֆից կառուցված երաժշտական ուսումնարանի դինամիկ ձևերը, դպրոցական ակումբի անսիմետրիկ լուծված թեթև ու ինքնատիպ շենքը (հեղինակ՝ Յու. Հակոբյան), հայկական դասական ձևերով լուծված գրադարանը (հեղինակ՝ Ա. Շիրինյան) և այլն։

Կիրովի պողոտան ձգվում է դեպի կենտրոն՝ Շահումյանի անվան կլոր հրապարակը, որտեղ կանգնեցված է Ստ. Շահումյանի արձանը (քանդակագործներ Ա. Գրիգորյան և Ս. Ստեփանյան, պատվանդանի և բարեկարգման հեղինակ՝ Ա. Շիրինյան)։ Հրապարակի, արձանի ու պուրակի մասշտաբների փոխհարաբերությունը հիանալի ներդաշնակում է մարզային փոքրիկ կենտրոնին։ Սակայն պետք է նկատել, որ ճառագայթաձև հեռացող փողոցները, որոնք այժմ կառուցապատվում են բարձր շենքերով, պարտադրում են վերանայել այս հրապարակի ճարտարապետական ձևավորումը։

Մարզային սովետի գործկոմի նորակառույց շենքի (հեղինակ՝ Ն. Կենգերլի) ճարտարապետը ցանկացել է լուծել երկու հրապարակները միմյանց կապելու առաջադրված խնդիրը։

Հոկտեմբերյան փողոցի հաջորդ՝ մարզկոմի շենքը հաջող կերպով լուծված է իբրև վարչական հրապարակի գերիշխող տարր (նկ. 3, հեղինակներ՝ Ի. Վրդանեսով, Յու. Իբրահիմով, Ա. Բոլոտինա)։ Հաջող է ընտրված այս քառահարկ շենքի դիրքը. նրա հարթ, որմնասյուներով չլատված միապաղաղ ֆոնի վրա առանձնահատուկ վեհություն են ստանում կառավարական ամբիոնը (ճարտարապետներ՝ Գ. Մեջիդով և Ի. Վրդանեսով) և Լենինի արձանը (քանդակագործներ Միր-Կասիմով և Ս. Կուլիև)։

Տեղանքի նեղված լինելը պատճառ է դարձել, որ հրապարակի հյուսիս-արևելյան կողմը բոլորովին չկառուցապատվի։ Բայց դրանով իսկ ձեռք է բեր-



Նկ. 3. Մարզկոմի շենքը

վել քաղաքաշինարարական մի մեծ առավելություն։ Այստեղից, կանաչապատ ձորով բացվում է մի հոյակապ տեսարան։ Ամենից առաջ երևում է մարզային ստադիոնն իր պարզ, բայց արտահայտիչ ձևերով, միանգամայն ձուլված շրջապատի բնության հետ (հեղինակներ՝ Յու. Տոլստոնոգով, Մ. Դատիև, Յու. Հակոբյան)։ Հրապարակից դեպի այնտեղ իջնող աստիճաններով, լուսավորության սյուներով և նորատունկ ծառաշարքերով ստեղծված հեռանկարը շեշտում է անկաշկանդ միջավայրի հանդիսավորությունը։

Սպորտային այս մեծ համալիրը մտնում է Նելսոն Ստեփանյանի անվան քաղաքային զբոսայգու կանաչ տարածությունների մեջ, որով ավելի հնչեղ են դառնում ճարտարապետության ծավալային ու գունային տարրերը։ Հետզհետե իր կերպարանքն է ստանում և հաճելի ճեմավայր դառնում զբոսայգին։ Շահումյանի անվան հրապարակից բացվող մուտքի շրջանում ցածր հենապատերով, անցուղիներով, մարգերով, թփուտներով, ծաղկանոցներով ու ծառերով շրջապատը կազմակերպված ու ձևավորված է տեղանքին խստորեն համապատասխան, ինչպես երկրաչափական, այնպես էլ ազատ լուծումներով։ Առանձին հմայք ունեն անկանոն եզրագծերով ջրավազանն ու մանկական խաղերի գունեղ կառուցվածքները։

Շահումյանի հրապարակից սկիզբ առնող Լենինի պողոտան նույնպես դեռ իր վերջնական կերպարանքը չի ստացել։ Այն վերակառուցվում է որպես քաղաքի գլխավոր փողոցներից մեկը, որտեղ կան և լինելու են բնակելի և վար-

չա-հասարակական մեծ շենքեր։ Տարբեր մասերում կառուցված են գեղեցիկ ու գունեղ բնակելի շենքեր, բայց պողոտային միասնական տեսք են հաղորդում մայթերի վրայով ընթացող սաղարթախիտ ծառաշարքերը։

Այս պողոտայի վերին ծայրում. նրա հետ հատվող Կարմիր բանակի փողոցին գուգահեռ, դեպի աջ տարածվում է Աղիղբեկովի անվան ճեմելիքն իր ստվերախիտ ծառերով, դեպի ձախ՝ Կնունյանցի պուրակը։ Վերջինիս երկայնական առանցքով ձգվում է մի լայն ճանապարհ, որը հարավ-արևելքից, Պավլովի փողոցի շարունակության վրա սկսվում է հանդիսավոր, լայն աստիճանների մի մեծ շարքով։ Այնտեղից վեր բարձրանալիս երևում է աննկուն հեղափոխական Բ. Կնունյանցի կիսանդրին իր նրբակերտ քանդակազարդ պատվանդանով (պուրակի և արձանի պատվանդանի նախագծերը Ա. Շիրինյանի)։

Հիշյալ կանաչ զանգվածների միջև շրջապատին ներդաշնակող և ինքնատիպ ձևերով աչքի ընկնող կառուցվածք է Միծեռնակ սրճարանը (հեղինակ՝ Յու. Հակոբյան)։ Նրանից հարավ, փողոցի երկու կողմի կանաչազարդ միջավայրում բարձրանում են հարավային բնակելի շրջանի նորակառույցները։ Սա քաղաքի ամենաամբողջական մասերից մեկն է, որովհետև կառուցապատվել է միանգամից։ Բացի կողմնորոշման (դեպի արևելք) առավելությունից, տողաշար կառուցապատմամբ այստեղ ձեռք է բերվել գեղարվեստական հիանալի էֆեկտ։ Կառուցապատման այս ձևը կիրառվում է նաև հյուսիս-արևելյան բնակելի զանգվածում, որի կառուցապատումը դեռ չի ավարտվել։



Նկ. 4. Մ. Գորկու անվան թատրոնի շենքը (հեղինակներ՝ Ի. Վրդանեսով, Ա. Շիրինյան)

Ճարտարապետական լավ ձևավորում կունենա Գորկու փողոցը. նրա ընկրղրում, Շահումյանի հրապարակի մոտ է գտնվում «Ռոսիա» կինոթատրոնի վարդագույն տուֆակերտ շենքը, իսկ այժմյան շուկայի մերձակայքում նա-

խատեսված է քաղաքային առևտրի կենտրոն ստեղծել՝ հանրախանութով, ծածկած շուկայով և ռեստորանով։ Նույնպիսի լավ հեռանկարներ ունեն Պավլովի, Մարքսի, Կամոյի, Թումանյանի և այլ փողոցներ։ Դրանց ճարտարապետական դիմագիծը շատ դեպքերում որոշվելու է վերակառուցումների շնորհիվ։ Այս դեպքում առաջին հերթին պետք է նկատի ունենալ համալիրային գեղագիտության հարցերը, որպեսզի կոպիտ հակադրություններ և անհամապատասխանություններ տեղի չունենան, որ յուրաքանչյուր շենք տեղի պայմանների նկատմամբ լավագույն ձևով տեղադրվի կամ տեղակապվի, որ միջավայրի գեղեցկացման համար օգտագործվեն արտահայտչական բոլոր մատչելի միջոցները, մանավանդ ճարտարապետական փոքր ձևերը։

Հաջող է կատարվում հին թաղամասերում նոր բնակելի շենքերի տեղադրումը 0,8—1,5 հեկտարանոց թաղամասերի պահպանումով։ Շենքերի բակային ճակատները զուրկ չեն արտահայտչականությունից, բայց բակերը դեռ բարեկարգման շատ կարիք են զգում։ Ինչպես նոր կառուցվող մասերում, այս տեղ ևս շենքերի ճակատները մեծ մասամբ ծածկված են ծառերի ետևում։ Առանձնապես երևացող տեղերում ճակատների արտահայտչականության վրա ավելի մեծ ուշադրություն է դարձվում (սրբատաշ քարի օգտագործում, գունային էֆեկտներ, խանութների ձևավորում և այլն)։ Լավ է դիտվում մարզկոմի շենքի ետևում, ծաղկազարդ ազատ տարածության վերին մասում, երկու փողոցների միշև ընկած ամբողջ տարածությունն ընդգրկող տիպային բնակելի շենքը (նկ. 5, տեղակապումը Ս. Մակարյանի)։ Նրա գլխավոր ճակատն առայժմ ոչնչով չի փակվում։ Առանձին հմայք են տալիս ճակատի ամբողջ երկարությունը բռնող նկարազարդ ցուցափեղկերը։ Հաջող են օգտագործված քարերի ու հարդարանքային սվաղի գունային առանձնահատկությունները։ Շենքի առաջ ծառերը չպետք է մեծացնել, այլապես կծածկվեն թե՛ շենքը և թե՛ հիանալի ձևավորում ունեցող ցուցափեղկերը։

Ստեփանակերտում սկսում են աչքի ընկնել փոքր ճարտարապետական ձևերով ու քանդակներով համակառույցները, փողոցներն ու այգիները զարդարելու միանգամայն խրախուսելի երևույթը։ Հատկապես ուշադրության են արժանի կանգառների, մանկական հիմնարկների և զբոսավայրերի ծածկույթները, նստարանները, զանազան կրպակները, ցայտաղբյուրները և այլն։ Նրանց քարով, մետաղով, փայտով, ապակով և պլաստիկ նյութերով կազմված թեթև կառուցվածքները և ակնախտիղ գույները թարմ շունչ են հաղորդում միջավայրի ճարտարապետական կառուցապատմանը։

Առանձնապես աչքի են ընկնում «Երեք ծորակների» անկյունային բեկվածքներով քարակերտ շինությունը՝ ստվերախիտ ծառերի տակ, քաղաքի հին մասում (հեղինակ՝ Ա. Շիրինյան), Չկալովի փողոցում, մանկական զբոսայգու ֆոնի վրա կառուցված բազալտե քանդակազարդ աղբյուրը (հեղինակ՝ Յու. Հակոբյան), որի նշանակությունը կմեծանա, երբ կառուցվեն նաև նրա երկու կողմից նախատեսված աստիճանները, Շահումյանի հրապարակում, պետբանկի շենքի առաջ, բարձր, քարակերտ հենարանի վրա տեղադրված ծաղկամանը (հեղինակ՝ Յու. Հակոբյան), թատրոնի մուտքի մոտ կառուցված պատվո տախտակը (հեղինակ՝ Ա. Շիրինյան) և այլն։

Արդիական շնչով է ստեղծված հատկապես քաղաքի մուտքը ձևավորող մյուս հուշարձանը։ Այն սպիտակ մարմարե խորհրդանշական մի քանդակ է, տեղադրված Կիրովի պողոտայի առանցքով (քանդակագործ՝ Յու. Ավետիսյան,

ճարտարապետ՝ Յու. Հակոբյան)։ Ստորին մասի պլաստիկ ձևերն առաջացել են քարի հողմնահարումից. քանդակի վերնամասն օրգանապես ձուլվելով նրա հետ, կազմել է մի ամբողջություն։ Վերևում քանդակված է սլացքի մեջ գտնվող մարդկային մի գլուխ։ Շարժում արտահայտող մասերից կազմված այս սլացիկ համադրվածքը խորհրդանշում է ժամանակակից մարդու խիզախումները գիտության, տեխնիկայի և հասարակական կյանքի ասպարեզներում, նրա հոգևկան ուժի անսպառ հնարավորությունները և հանուն առաջադիմության անծանոթ հեռուները գրոհելու պատրաստակամությունը։ Այսպես երևան են գալիս բազմաղան թեմաներով, ձևերով ու նյութերով բարձրարվեստ ստեղծագործություններ, որոնք, ինքնըստինքյան, պահանջում են ավելի բծախնդիր լինել և թույլ չտալ անարվեստ գործերի երևան գալուն։

Նկ. 5. Տիպային բնակելի շենք քաղաքի կենտրոնում

Ստեփանակերտցիք իրավունք ունեն հպարտանալու իրենց քաղաքով, որովհետև այն կերտելու համար արդյունավետ ջանքեր են թափվել։ Խաղաղ կյանքի ընդամենը մի քանի տասնամյակի ընթացքում մեծ նվաճումներ են արձանագրվել տնտեսական, հասարակական և մշակութա-կենցաղային ասպարեզներում։ Դրանք իրենց արտահայտությունն են գտել համապատասխան շինությունների, համակառույցների և համալիրների կերտվածքի, ու փոխադարձ դասավորության մեջ։ Ստեղծված է այն հիմքը, որի վրա հնարավոր է ունենալ բարեկեցիկ կյանքի հարմարություններով և պայծառ հեռանկարներով աչքի ընկնող մի քաղաք։ Հիշյալ նվաճումները նշանակալից երևույթ են նաև Ադրբեջանական ՍՍՀ ճարտարապետության մեջ և արժանի ավանդ հայ-ադրբեջանական մշակութային կապերի ստեղծագործական համագործակցության համար։

ОСОБЕННОСТИ ЗАСТРОЙКИ СТЕПАНАКЕРТА

Н. Ц. ПАПУХЯН

Резюме

Город Степанакерт—центр НКАО Азербайджанской ССР, был создан за годы Советской власти. В кратчайший исторический срок на месте небольшого селения Ханкенды вырос современный, подчиненный основам советской урбанистики, город с населением 30000 человек.

Составленный в 1968 г. проект планировки и застройки города на расчетный срок до 1980 г. рассматривает весь город как один жилой район, разделенный на отдельные микрорайоны с населением 4—5 тысяч человек. Это обеспечивает рациональное размещение объектов хозяйственного, общественного и культурно-бытового назначения. Городские ансамбли, вписывающиеся в ландшафт, придают особую прелесть облику молодого города.